

# Սարդարապատի Յուզահամալիրը

Յուզահամալիրի ճարտարապետն է **Ռաֆայել Իսրայելեանը**, քանդակագործը՝ **Արա Յարուֆիլևեանը**:

Յուզահամալիրը կառուցուած է ճակատամարտի տեղը: «Չանգակատունը» (35 մ բարձրութեամբ) կը հանդիսանայ համալիրի կեդրոնը:

«Չանգակատան» կողմ ուրուանկարը գծուած է կապոյտ երկնքին մէջ:

Անոր յօրինուածքը կազմուած է չորս վերասլաց մոյթերէ, որոնց առանցքէն կ'երեւի երկինքի կապոյտը՝ ողողելով «Չանգակատունը» բոլոր կողմերէն:

Երեք շարքով կախուած են զանգերը:

Անոնք կարծես պատրաստ են զանգահարելու եւ ոտքի հանելու ժողովուրդը վտանգի պահուն:



Հայ մեծանուն ճարտարապետ Ռաֆայել Իսրայելեանը նախագծած է Սարդարապատի յուզահամալիրին ձախ, փոքր բարձունքի վրայ կառուցած է Հայաստանի ազգագրութեան թանգարանի շէնքը, որ իր ծաւալով ու գաղափարով լրացուցած է ամբողջացուցած է համալիրը:

Հարաւային (ետեւի) ճակատի երկու ութանիստ աշտարակներուն հեղինակը մէկը՝ Արագածին, միւսը՝ Արարատին ուղղուած երկու բացուածք-լուսամուտ նախատեսած է:

Աւելի քան 30-ամեայ գործունեութեան ընթացքին թանգարանը դարձած է պատմամշակութային յիշողութեան եւ տեղեկատուութեան շտեմարան:

Թանգարանին մէջ կը ցուցադրուի հայոց աւանդական մշակոյթի համակարգը՝ կենսապահովման, սոցիալական, հոգեւոր մշակոյթներու տարրերով հանդերձ:

Հ.Մ.Ը.Մ. Սուրբիոյ  
Շրջ. Սկաւուտ Խորհուրդ  
Թիւ 4/2020



Հրատարակչական  
Յանձնախումբ



Երբ չի մնում ելք ու ճար,  
հենթերն են գտնում հնար:  
Այսպէս ծագեց, արեգակեց  
Սարդարապատի մարտը մեծ:  
Չանգեր, դօղանջք,  
Սրբազան քաջերին կանջք  
Այս արդար պատից:  
Մերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչեք  
Սարդարապատից:

ՓԱ՛ՌՔ, ՅԱՂԹԱՆԱԿ ԿԵՐՏԱՍ ՇԵՐՈՍՆԵՐՈՒՆ  
ՈՒ ԲԻՒՐ ՅԱՐԳԱՆՔ՝ ՆԱՀԱՍԱԿՆԵՐՈՒՆ:







# ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ

# Հայաստանի Հանրապետության Զինանշան

-1918 թուականի ՄԱՅԻՍ ամսուան 21-29 –ին տեղի ունեցաւ ՄԱՐԴԱՐԱՊԱՏ-ի (Արմաւիր) հերոսամարտը, ուր ասպատակող թուրքը ջախջախուելով խայտառակուեցաւ ու փախաւ, որուն յաջորդեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակումը՝ 28 Մայիս 1918-ին:

\_Այնուհետեւ (9 Մայիս 1945) աւարտեցաւ Հայրենական Պատերազմը, որուն ընթացքին հայ ժողովուրդը զոհ տուաւ 300 000 հայ նահատակ: Առաջին Համաշխարհային պատերազմին Գերմանացիք կը մեղսակցէին թուրքին ու կ'ըսէին. «Թող մնայ մէկ հայ աշխարհի երեսին եւ զայն բերէք ու դրէք Պերլինի թանգարանը..»: Այդ թուականէն 30 տարիներ ետք, Խորհրդային Միութեան յաղթական հայ բարձրաստիճան զինուորականը՝ Լուեր Սաֆարեան 1945 –ի Մայիսին մտաւ Պերլին:

-9 Մայիսին, «Հարսանիք Լեռներում» անուն գործողութեամբ ազատագրուեցաւ հերոսական Արցախի Սշակոյթի քաղաք ՇՈՒՇԻ-ն՝ ազերի վոհմակներէն, փառքի դափնեպսակ մը եւս աւելցնելով հայ մարդու քաջագործութեան ու զինուորական հմտութեան ու տաղանդին վրայ:

Հայաստանի ազգային դրօշակը որդեգրուեցաւ խորհրդային առաջին ժողովին,

1 Օգոստոս 1918-ին: Դրօշակին գոյները ճշդուեցան հորիզոնական՝ կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն:

Գոյներուն իմաստները՝ դրօշակին կարմիրը կը նշանակէ արին, կապոյտը կը նշանակէ երկինքը,

իսկ նարնջագոյնը՝ ցորենը:

Ազգային զինանշանի որդեգրումը կատարուեցաւ աւելի ուշ, Յունիս 1920-ին, երբ Հայաստանի կառավարութիւնը հաստատեց ճարտարապետ Ալեքսանդր Թամանեանի կազմած եւ գեղանկարիչ Յակոբ Կոճոյեանի գծած զինանշանին նախագիծը: Զինանշանին կեդրոնը կը գտնուի վահանաձեւ տարածութիւն մը բաժնուած չորս մասի:

Իւրաքանչիւր մասի մէջ գետեղուած են Հայաստանի չորս թագաւորութիւններու զինանշանը՝ Արտաշէսեան, Արշակունեան, Բագրատունեան եւ Ռուբինեան:

Մէջտեղը պատկերուած են Մեծ ու Փոքր Մասիսները եւ անոնց վերեւ

Հ.Հ «Հայաստանի Հանրապետութեանը» տառերը:

Վահանին աջ ու ձախ կողմերը կան արծիւ մը եւ առիւծ մը,

իսկ ներքեւը կ'երևին սուր, գրիչ, հասկեր ու շղթայ:

Արծիւն ու առիւծը կը խորհրդանշեն ուժն ու կորովը, ներքեւը գտնուող սուրը, գրիչը, հասկերը ու շղթան կը բացատրուին հետեւեալ ձևով.

-Սուրը կը խորհրդանշէ ուժը:

-Գրիչը կը խորհրդանշէ մտաւորական եւ մշակութային այն արժէքները, որոնք ժողովուրդ մը կը պահեն:

-Հասկերը կը խորհրդանշեն երկրի արդիւնաբերութիւնը եւ հարստութիւնը: Շղթան կը խորհրդանշէ այն կղպանքը, որով կը պահպանենք երկրին սահմանները եւ չենք արսոներ, որ օտարները խորտակեն զանոնք:



Արիւնից ծորած երիզ մի կարմիր,  
Երկնքից պոկուած կտոր մի կապոյտ,  
Հասուն հասկերի շող նարնջագոյն,  
Եւ վեց դարերի խաւարի վրայ  
Դրօշ Եռագոյն...

Անդրանիկ Օտտուկեան

